

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՖՖ առաջին փոխնախագահ,

գործադիր տնօրեն

Ա.Մինասյան

**ՖՈՒՏԲՈՒԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ, ՀՖՖ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿ ԶԼՄ-ՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈՂՎԱԾ 1

- 1.1.«Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքական թիմերի մասնակցությամբ հանդիպումների, ՀՖՖ-ի կողմից անցկացվող միջոցառումների /այսուհետ Միջոցառումներ/ ժամանակ ՉԼՄ-ների հավատարմագրման կարգը» /այսուհետ Կարգ/ մշակված է ՀՀ օրենսդրության, ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի, ՀՖՖ-ի համապատասխան կանոնակարգերի, ղեկավարող փաստաթղթերի հիման վրա եւ բխում է դրանցում ամրագրված սկզբունքներից:
- 1.2.Սույն Կարգը կարգավորում է Զանգվածային Լրատվամիջոցների /այսուհետ ՉԼՄ/ հավատարմագրումը Միջոցառումների լուսաբանման նպատակով, ՉԼՄ-ների եւ նրանց ներկայացուցիչների իրավունքներն ու պարտականությունները, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻՑ գրկելու հիմքերը եւ կարգը, Միջոցառումների լուսաբանման հարցերը, ինչպես նաև ՉԼՄ-ների ներկայացուցիչների հավատարմագրման հետ կապված այլ հարցեր:

ՀՈՂՎԱԾ 2

- 2.1.Միջոցառումներին ՉԼՄ-ների հավատարմագրումն իրականացվում է ՀՖՖ-ի կողմից եւ հանդիսանում է ՀՖՖ-ի բացառիկ իրավունքը:
- 2.2.Հավատարմագրման արդյունքում տրվում են անվանական ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐ՝ համաձայն ՉԼՄ-ների կողմից ներկայացված ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-երի:
- 2.3.ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻՐԸ հանդիսանում է ՉԼՄ-ի հավատարմագրումը հավաստող փաստաթուղթ:
- 2.4.Յուրաքանչյուր ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻՐ վավեր է միայն այն միջոցառման համար, որը նշված է ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻՐ վրա:

2.5. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ տեսակը, հավատարմագրված միջոցառման տեղը եւ օրը նշվում է ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ վրա:

2.6. ԶԼՄ-ները պատասխանատվություն են կրում սույն Կարգում ամրագրված կանոնների, ինչպես նաեւ սույն Կարգի անբաժանելի մաս հանդիսացող ՄԵԴԻԱ Հուշաթերթիկի՝ իրենց հավատարմագրված լրագրողի կողմից խախտման հետեւանքում ՀՖՖ-ին հասցված վնասի համար:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳ

ՀՈԴՎԱԾ 3

3.1. Բոլոր ԶԼՄ-ներն իրավունք ունեն, ըստ սահմանված կարգի, ներկայացնել ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ՝ իրենց ներկայացուցիչներին հավատարմագրելու համար: ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-ի օրինակը ԶԼՄ-ները կարող են ներբեռնել ՀՖՖ պաշտոնական կայքից:

3.2. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ -ը ներկայացվում է ՀՖՖ՝ ԶԼՄ-ի ղեկավարի կողմից կնքված եւ ստորագրված:

3.3. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ -ին պարտադիր կցվում է.

- Հավատարմագրվողի լրագրողական վկայականի պատճենը՝ ԶԼՄ-ի ղեկավարի կողմից կնքված եւ ստորագրված:

- Ազատ լրագրողի համար այն լրատվամիջոցի հետ աշխատանքային պայմանագրի պատճենը /առնվազն մեկ ԶԼՄ/, որի համար աշխատելու է:

- Արտասահմանյան լրատվամիջոցների ներկայացուցիչների համար նաեւ ՀՀ արտաքին գործերի նախարարությունում իրենց հավատարմագրի պատճենը:

- Մեկ լուսանկար (3x4)

3.4. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-ը ներկայացնելով՝ ԶԼՄ-ները լրացուցիչ հավաստում են, որ այն լրացված է Բարեխղճորեն եւ ներկայացված է ԶԼՄ-ի հենց այն ներկայացուցիչը, ով մշտապես լուսաբանում է ֆուտբոլ:

3.5. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ տրվում է ԶԼՄ-ների կողմից ներկայացված ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-երի հանգամանալից ուսումնասիրությունից հետո:

3.6. ԶԼՄ-ները պարտավոր են ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-ը եւ կից փաստաթղթերը ՀՖՖ սահմանած կարգով եւ հավատարմագրման մասին ՀՖՖ պաշտոնական կայքում գետեղված հայտարարությունում նշված ժամկետի ընթացքում ներկայացնել ՀՖՖ:

- 3.7. Եթե ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-երի քանակն ավելին է, քան հավատարմագրման ենթակա Միջոցառման տեղերի առկայությունը, ապա հայտերը տրվում են առաջնահերթության հետևյալ սկզբունքով.
- ՀՖՖ-ի եւ Ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումների պաշտոնական հեռարձակող ՁԼՄ-ներ:
 - ՀՖՖ-ի եւ ֆուտբոլի ազգային հավաքականների պաշտոնական գործընկեր եւ հովանավոր ՁԼՄ-ներ:
 - Խոշոր լրատվական գործակալություններ/կայքեր, որոնք ունեն հատուկ մարզական/ֆուտբոլային պարբերական թողարկումներ/կայքին հավասարեցված էջեր:
 - Ֆուտբոլային մասնագիտացված գործակալություններ/կայքեր:
 - Ամենօրյա ֆուտբոլային թերթեր:
 - Ամենօրյա ընդհանուր մարզական գործակալություններ/կայքեր:
 - Ամենօրյա մարզական թերթեր:
 - Ֆուտբոլային շաբաթաթերթեր:
 - Ռադիոընկերությունների մարզական լրագրողներ:
 - Հեռուստաընկերությունների մարզական լրագրողներ:
 - Օրական 3000 եւ ավելի այցելու ունեցող ոչ մասնագիտական Մեդիա:
- 3.8. Սույն Կարգի 3.7.կետում թվարկված ՁԼՄ-ները` բացառությամբ ոչ մասնագիտական Մեդիայի, կարող են հավատարմագրել 2 /երկու/ լրագրող և 1 ֆոտոլրագրող:
- 3.9. Ոչ մասնագիտական Մեդիան կարող է հավատարմագրել 1 /մեկ/ լրագրող և 1 ֆոտոլրագրող :
- 3.10.Ֆոտոգործակալությունները կարող են հավատարմագրել 2 /երկու/ ֆոտոլրագրող:
- 3.11.Բացառություն են կազմում ՀՖՖ-ի, ազգային հավաքական թիմերի պաշտոնական հեռարձակողի ու հովանավոր եւ գործընկեր ՁԼՄ-ների հավատարմագրման ենթակա լրագրողների թիվը որոշում է ՀՖՖ-ն` ըստ անհրաժեշտության:

4.1. ՀՖՖ-ն պարտավոր է ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ տրամադրման կամ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ՀԱՅՏ-ի մերժման մասին որոշումները ընդունել ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-երի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ քան Միջոցառման անցկացման օրվանից երկու օր առաջ:

4.2. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-ը կարող է մերժվել.

4.2.1. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ստանալու համար սույն Կարգով սահմանված պայմանները չպահպանելու դեպքում

4.2.2. Հավատարմագրման ենթակա միջոցառման անցկացման վայրի տեղերի սահմանափակ լինելու դեպքում՝ պահպանելով սույն Կարգով սահմանված առաջնահերթության սկզբունքը:

4.2.3. Եթե տվյալ ՁԼՄ-ն եւ/կամ ՁԼՄ-ի ներկայացուցիչը իրենց հրապարակումներում, տեղեկատվական նյութերում եւ իրենց Մեդիա արտադրանքում օգտագործել եւ տարածել են ոչ ճիշտ, խեղաթյուրված, փաստերով չհիմնավորված, վարկաբեկող տեղեկություններ ֆուտբոլի, ազգային հավաքական թիմերի, ՀՖՖ-ի, ֆուտբոլային միջոցառումների հետ կապված:

4.3. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ինչպես տրամադրման, այնպես էլ մերժման վերջնական որոշումը պատկանում է բացառապես ՀՖՖ-ին:

4.4. ՀՖՖ-ն պարտավոր չէ բացատրություններ տալ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ինչպես տրամադրման, այնպես էլ մերժման դեպքում:

4.5. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԻ տրամադրման վայրի եւ ժամանակի մասին ՁԼՄ-ները տեղեկացվում են ՀՖՖ պաշտոնական կայքի միջոցով:

4.6. ՁԼՄ կողմից սահմանված ժակետում ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻՆ Հստանալու դեպքում այն կարող է փոխանցվել այլ ՁԼՄ-ների՝ պահպանելով սույն Կարգով սահմանված առաջնահերթության սկզբունքը:

**ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՁԼՄ-ՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀՈԴՎԱԾ 5

5.1. ՀՖՖ-ն տրամադրում է հինգ կարգի ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ.

Ա/ «Հեռարձակող» /Broadcaster/ Բ/ «Մամուլ» /Press/, Գ/»Ֆոտո» /Photo/, Դ/
«Հեռուստատեսություն» /TV/, Ե/ «Ռադիո»/Radio

5.2. «Մամուլ» /PRESS/ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողներն իրավունք ունեն լինելու միայն ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ վրա նշված մամուլի օթյակում եւ նշված տեղում, մամուլի

ասուլիսների սրահում, եւ հանդիպման ավարտից հետո խառը գոտում, եթե այդպիսին նախատեսված է:

- 5.3.«Տոտո» /Photo/ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողներն իրավունք ունեն լինելու մամուլի ասուլիսների սրահում եւ խաղաղաշտում՝ հատուկ իրենց համար նախատեսված պահերին եւ տեղերում:
- 5.4.«Հեռուստատեսություն» /TV/ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողներն իրավունք ունեն լինելու միայն ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ վրա նշված մամուլի օթյակում եւ նշված տեղում, մամուլի ասուլիսների սրահում, եւ եւ հանդիպման ավարտից հետո խառը գոտում, եթե այդպիսին նախատեսված է:
- 5.5.«Ռադիո» /Radio/ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողներն իրավունք ունեն լինելու միայն ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ վրա նշված մամուլի օթյակում եւ տեղում, մամուլի ասուլիսների սրահում, եւ եւ հանդիպման ավարտից հետո խառը գոտում, եթե այդպիսին նախատեսված է:
- 5.6. «Հեռարձակող» /Broadcaster/ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողների իրավունքները եւ պարտականությունները սահմանված են Հեռարձակողի հետ կնքված համաձայնագրում:
- 5.7. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողները պարտավոր են բարեխղճորեն օգտվել ՀՖՖ-ի տրամադրած բոլոր միջոցներից եւ չչարաշահել իրենց իրավունքները:
- 5.8. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողները պարտավոր են հարգել միջոցառման մասնակիցների, կողմերի, ՀՖՖ-ի, բոլոր ներկաների իրավունքները, շահերը, հեղինակությունը:
- 5.9. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողները եւ նրանց ներկայացրած ՁԼՄ-ները պարտավոր են ստուգել իրենց կողմից տարածվող տեղեկատվության հավաստիությունը, օգտագործել միայն իրականությանը համապատասխանող փաստեր եւ տեղեկություններ, պահպանել բոլոր կանոնները, լրագրողական էթիկայի միջազգայնորեն ընդունված նորմերը:
- 5.10. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ կրողները եւ նրանց ներկայացրած ՁԼՄ-ները պարտավոր են չտարածել ոչ ճիշտ, խեղաթյուրված, փաստերով չհիմնավորված, վարկաբեկող տեղեկություններ ֆուտբոլի, ազգային հավաքական թիմերի, ՀՖՖ-ի, ֆուտբոլային միջոցառումների հետ կապված:

ՀՈՂՎԱԾ 6

ՀՖՖ-Ի ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1.ՀՖՖ-ն պարտավոր է

- 6.1.1. Հնարավորություն ստեղծել հավատարմագրման ենթակա ՀՖՖ միջոցառումների մասնակիցների, ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքական թիմերի մասնակցությամբ հանդիպումների խաղացողների եւ պաշտոնատար անձանց հետ ՁԼՄ-ների հավատարմագրված ներկայացուցիչների շփման համար:
- 6.1.2. ՁԼՄ հավատարմագրված ներկայացուցիչներին տրամադրել նորություններ եւ տեղեկատվություն, միաժամանակ պաշտպանելով հավատարմագրման ենթակա ՀՖՖ միջոցառումների, Հայաստանի ազգային հավաքական թիմերի մասնակցությամբ հանդիպումների մասնակիցների, կողմերի իրավունքները:
- 6.1.3. ՁԼՄ-ների հավատարմագրված ներկայացուցիչների համար ապահովել ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքական թիմերի մասնակցությամբ ուսումնամարզական հավաքների ընթացքում Հայաստանի ազգային հավաքական թիմերի առնվազն մինչեւ 15 րոպե մեկ բաց պարապմունք՝ բաց պարապմունքից անմիջապես հետո ապահովելով, որ ՁԼՄ-ների ներկայացուցիչները լքեն բաց պարապմունքի տարածքը եւ որ անջատված լինեն բոլոր մշտապես տեղադրված հեռուստատեսային եւ ֆոտո տեսախցիկները:
- 6.1.4. Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքական թիմերի մասնակցությամբ հանդիպումների հետ կապված ապահովել մեկ մինչխաղային եւ ոչ ուշ, քան խաղի ավարտից 20 րոպե անց մեկ հետխաղային մամուլի ասուլիս:

ՀՈՂՎԱԾ 7

ՈՒԺԻ ՄԵՁ ՄՏՆԵԼԸ

- 7.1. Սույն Կարգը եւ դրա անբաժանելի մաս հանդիսացող կանոնները ուժի մեջ են մտնում 2012 թվականի սեպտեմբերի 24-ից:

ՄԵԴԻԱ Հուշաթերթիկ

-**Յուրաքանչյուր հավատարմագրված լրագրողի** տրամադրվում է համարակալված ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ, որը լրագրողը պարտավոր է սահմանված ձևով կրել Միջոցառման ողջ ընթացքում:

-**«Մամուլ» /PRESS/** ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ կրողներն իրավունք ունեն լինելու **միայն** ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ վրա նշված մամուլի օթյակում եւ նշված տեղում, մամուլի ասուլիսների սրահում, եւ հանդիպման ավարտից հետո խառը գոտում, եթե այդպիսին նախատեսված է:

-**«Ֆոտո» /Photo/** ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ կրողներն իրավունք ունեն լինելու **միայն** մամուլի ասուլիսների սրահում եւ խաղաղաշտում՝ հատուկ իրենց համար նախատեսված պահերին եւ տեղերում:

-**«Հեռուստատեսություն» /TV/** ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ կրողներն իրավունք ունեն լինելու **միայն** ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ վրա նշված մամուլի օթյակում եւ նշված տեղում, մամուլի ասուլիսների սրահում, եւ խաղաղաշտում՝ հատուկ իրենց համար նախատեսված պահերին եւ տեղերում:

-**«Ռադիո» /Radio/** ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ կրողներն իրավունք ունեն լինելու **միայն** ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ վրա նշված մամուլի օթյակում եւ տեղում, մամուլի ասուլիսների սրահում, եւ հանդիպման ավարտից հետո խառը գոտում, եթե այդպիսին նախատեսված է:

-ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԻ կրողներն իրավունք ունեն օգտվել **միայն** իրենց համար ՀՖՖ-ի տրամադրած տարածքներից, բոլոր միջոցներից եւ իրավունքներից՝ առանց խախտելու դրանք:

-ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԻ կրողները **պարտավոր են հարգել** միջոցառման մասնակիցների, կողմերի, ՀՖՖ-ի, բոլոր ներկաների իրավունքները, շահերը, հեղինակությունը:

Հավատարմագրված միջոցառումների **տեսանկարահանման բացառիկ իրավունքը** պատկանում է ՀՖՖ-ին:

-Հավատարմագրված միջոցառումների **տեսանկարահանում** երրորդ անձինք իրավունք ունեն իրականացել բացառապես ՀՖՖ-ի կողմից նախապես թույլտվության դեպքում՝ կնքված համաձայնագրերի հիման վրա:

-Որեւէ այլ ԶԼՄ-ի **արգելվում է** մարզադաշտում կամ հավատարմագրված միջոցառման տարածքում որեւէ միջոցով՝/web տեսախցիկ, բջջային հեռախոս, ոչ պրոֆեսիոնալ կամ պրոֆեսիոնալ տեսախցիկ եւ այլն/, որեւէ կետից իրականացնել որեւէ տեսանկարահանում, ինչպես նաեւ օգտագործել երրորդ անձի կողմից կատարված տեսանկարահանումները՝ բացառությամբ սույն Հուշաթերթիկով նախատեսված կարգի:

-Բոլոր տեսակի միջոցառումների /մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ եւ այլն/
ինտերնետային ուղիղ հեռարձակման համար պետք է լինի ՀՖՖ-ի համաձայնությունը:

-ՀՖՖ-ն իրավունք ունի **չհամաձայնել** ինտերնետային ուղիղ հեռարձակման:

-Խառը գոտում իրավունք ունեն լինել՝ **ըստ հերթականության** ՀՖՖ-ի եւ Ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումների պաշտոնական հեռարձակող ՁԼՄ-ների, ՀՖՖ-ի եւ ֆուտբոլի ազգային հավաքականների պաշտոնական գործընկեր եւ հովանավոր ՁԼՄ-ների հավատարմագրված ներկայացուցիչները, «Մամուլ», «Ռադիո», «Հեռուստատեսություն» տեսակի ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ունեցողները:

-Ֆուտբոլիստները խառը գոտում հարցազրույց տալու իրավունքից օգտվում են ըստ իրենց հայեցողության:

-Ֆլեշ /Flash/ հարցազրույց՝ հատուկ այդ նպատակով հատկացված տեղում անելու բացառիկ իրավունքը պատկանում է ՀՖՖ-ի եւ Ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումների պաշտոնական հեռարձակող ՁԼՄ-ներին, ՀՖՖ-ի եւ ֆուտբոլի ազգային հավաքականների պաշտոնական գործընկեր եւ հովանավոր ՁԼՄ-ներին:

-Ֆլեշ /Flash/ հարցազրույցը կարող է տևել մինչև 90 վայրկյան, որին կարող է մասնակցել միայն գլխավոր մարզիչը եւ/կամ 1 ֆուտբոլիստ:

-Բոլոր կարգի հարցազրույցները պետք է նախապես համաձայնեցվեն ՀՖՖ մամուլի քարտուղար հետ:

-Հավատարմագրված հեռուստաընկերությունները, որոնք ցանկություն ունեն օգտագործել հանդիպման մինչև 3 րոպե տևողությամբ տեսանյութը՝ **Հայլայթս /Highlights/**, այդ մասին պետք է նախապես տեղեկացնեն /նշեն/ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ-ում:

-Հավատարմագրված հեռուստաընկերությունները «Հայլայթս»-ը կարող են բեռնել հատուկ FTP սերվերից, որի մասին ՀՖՖ-ն կտեղեկացնի:

-Տեսաբովանդակություն /videocontent/ օգտագործող ինտերնետային ՁԼՄ-ները կարող են «Հայլայթս»-ը բեռնել ՀՖՖ պաշտոնական կայքից:

-«Հայլայթս»-ը օգտագործող հեռուստաընկերություններն ու ինտերնետային ՁԼՄ-ներն իրավունք չունեն ծածկել պաշտոնական հեռարձակողի լոգոն:

-Հավատարմագրված լրագրողները պարտավոր են մարզադաշտ մտնել հատուկ իրենց համար նախատեսված մուտքով, եթե այդպիսին նախատեսված է:

-«Մամուլ» /Press/, «Հեռուստատեսություն» /TV/, «Ռադիո»/Radio ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ կրողները պարտավոր են հանդիպման սկզբից ոչ ուշ, քան 20 րոպե առաջ լինել մարզադաշտում իրենց հատկացված տեղերում:

-Հավատարմագրված լրագրողները ցանկության դեպքում **պարտավոր են** մամուլի ասուլիսների սրահ գնալ խաղի ավարտից անմիջապես հետո՝ **10 րոպեի ընթացքում**:

-Հավատարմագրված լրագրողները, ցանկության դեպքում **պարտավոր են** խառը գոտի գնալ Մամուլի ասուլիսի ավարտից անմիջապես հետո՝ **10 րոպեի** ընթացքում:

ՄԵԴԻԱ Հուշաթերթիկ PHOTO

-**Յուրաքանչյուր հավատարմագրված ֆոտոլրագրողի** տրամադրվում է համարակալված ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ, որը ֆոտոլրագրողը պարտավոր է սահմանված ձևով կրել ողջ Միջոցառման ընթացքում:

-Ֆուտբոլային հանդիպումների ժամանակ հավատարմագրված ֆոտոլրագրողները պարտավոր են նշված մարզադաշտի մամուլի ասուլիսների սրահ ներկայանալ **հանդիպումը սկսվելուց մեկ ժամ առաջ**: Դրանից հետո ներկայացած ֆոտոլրագրողները չեն կարող աշխատել նշված մարզադաշտում՝ անկախ ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ առկայության փաստից:

-Բոլոր հավատարմագրված ֆոտոլրագրողները ստանում են համապատասխան ժիլետ, որը պարտավոր են ողջ Միջոցառման ընթացքում կրել ցանկացած եղանակի եւ ցանկացած հագուստի վրայից: Ժիլետը կորցնելու կամ վնասելու դեպքում դրա արժեքը ենթակա է փոխհատուցման:

-Ֆոտոլրագրողներին թույլատրվում է աշխատել **բացառապես** իրենց համար հատկացված տարածքներում, որտեղ կարող են դիրքավորվել ժիլետները ստանալուց անմիջապես հետո:

-Հանդիպման սկզբից 10 րոպե առաջ ֆոտոլրագրողները կարող են գնալ խաղադաշտի եզրային գծի մոտ նախատեսված գոտի, որտեղ թիմերը կանգնում են պետական օրհներեգերի հնչեցման ժամանակ՝ պաշտոնական նկար անելու նպատակով:

-Մրցավարի կողմից կատարվող գնդակի եւ դարպասի վիճակահանությունից հետո, ֆոտոլրագրողները պարտավոր են **արագորեն** զբաղեցնել իրենց հատկացված տեղերը: **Արգելվում է** մնալ տվյալ գոտում՝ մարզչական շտաբին կամ ֆուտբոլիստներին լուսանկարելու նպատակով:

-Հանդիպման մեկնարկից սկսած, ֆոտոլրագրողներն իրավունք չունեն լքել իրենց հատկացված գոտին մինչև հանդիպման ընդմիջումը:

-Ֆոտոլրագրողներին **արգելվում է** օգտագործել լրացուցիչ լուսավորող սարքեր / Flash եւ այլն/ : Եռոտանիների օգտագործումը արգելվում է: Մոնոպոդների օգտագործումը չի արգելվում:

-Ֆոտոլրագրողներն իրավունք ունեն փոխել իրենց տեղը գոտում միայն ընդմիջմանը, երբ բոլոր ֆուտբոլիստները կլքեն խաղադաշտը:

-Ֆոտոլրագրողներին չի թույլատրվում աշխատել գովազդային վահանակների առջևում եւ չի թույլատրվում որևէ այլ կերպ խոչնդոտել գովազդային վահանակների տեսանելիությանը:

-Ֆոտոլրագրողներին չի թույլատրվում աշխատել հեռուստախցիկների համար նախատեսված տարածքներում:

-Ֆոտոլրագրողները կարող են տեղադրել հեռակառավարվող ֆոտոխցիկը խաղասկզբից ոչ ուշ, քան 10 րոպե առաջ՝ դարպասի և գովազդային վահանակների մեջտեղում, բայց այնպես, որ այն չխանգարի թե՛ դարպասին, թե՛ գովազդային վահանակներին /դարպասի ետևի գծին ոչ մոտիկ, քան 50 սմ հեռավորության վրա/: Հեռակառավարվող ֆոտոխցիկները, անկախ հանգամանքներից, կարող են սպասարկվել միայն ընդմիջման ժամանակ:

-Հանդիպման ավարտին բոլոր ֆոտոլրագրողները պետք է մնան իրենց տեղերում՝ մինչև բոլոր ֆուտբոլիստները կլքեն խաղադաշտը:

-Հանդիպման մեկնարկին, ընդմիջմանը եւ ավարտից հետո ֆոտոլրագրողներին արգելվում է մտնել խաղադաշտ եւ թիմերի հանդերձարան, թեկուզ պաշտոնյաների կամ ֆուտբոլիստների հրավերով: /Բացառությամբ ՀՖՖ-ի պաշտոնական ֆոտոլրագրողի/:

-Մամուլի ասուլիսների սրահում ֆոտոլրագրողներն իրավունք ունեն ունեն մինչև մամուլի ասուլիսը սկսելը կատարել մինչև 3 րոպե տեւողությամբ արարողակարգային լուսանկարահանում, որից հետո պարտավոր են դադարեցնել լուսանկարահանումը եւ այն շարունակել միայն **արագորեն** սրահի վերջնամաս տեղափոխվելուց հետո:

-Բոլոր լուսանկարները, որ արվում են հավատարմագրված ֆոտոլրագրողների կողմից, պետք է օգտագործվեն բացառապես խմբագրական նպատակներով եւ ոչ կոմերցիոն կամ այլ նպատակներով: